

Վկայու- թյուններ անցյալից...

Մեծ է մեր ժողովրդի հեղափոխությունը հոգևոր արժեքների, հարկապես՝ պատմական արժեքների նկատմամբ: Եվ դա հասկանալի է: Հայաստանն իրավամբ համարվում է թանգարան՝ բայ երկնքի տակ: Հնագիտական ուսումնասիրությունները, պեղումներից հայտնաբերած արժեքները հարուստ նյութ են տալիս պատմության, ազգագրության, ճարտարապետության, պարզապես՝ հոգևոր մշակույթի ցանկացած բնագավառի համար: Այսօրվա ինչպիսիք էլ այն մեծ հեղափոխությունը, որ առաջացրեց ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտի 2002-2004 թթ. գիտական, գիտակապակերպական և ֆինանսական գործունեության մասին հարյիքի քննարկումը ՀՀ ԳԱԱ նախագահության նիստում:

Կարդացե՛ք 2-րդ էջում

Կարդացե՛ք թերթի հաջորդ համարներում



Պայթյուններ Արեգակի վրա, տագնապներ Երկիր մոլորակում



Ականջին օդ արած...



Ամերիկյան բնապատկեր. վտանգավոր կիսալուսին

■ Ի՞նչ է կատարվում եղանակի հետ...

■ Հայոց հին և նոր գրերի մասին Որոնում և... սխալվելու իրավունք

■ Մետրոպ Մաշտոցը վառեց գիտության և կրթության հուրը, բայց գիտության ու կրթության զարգացումը Մաշտոցի պողոտա չէ...

Լևոն Հախվերդյանը՝ 80 տարեկան

Նոյեմբերի 2-ին ՀՀ ԳԱԱ նախաձեռնությամբ նշվեց մեծատաղանդ թատերագետ, արվեստագետ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Լևոն Հախվերդյանի ծննդյան 80-ամյակը:

Հորեկանական միստին բացման խոսքով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ Ֆադեյ Սարգսյանը: Նա բարձր գնահատեց վաստակաշատ գիտնականի ներդրումը արվեստի բնագավառում, փաստեց, որ Լևոն Հախվերդյանը, սկսած 1956 թ. մինչև իր մահը, աշխատել ու ստեղծագործել է ԳԱԱ Արվեստի ինստիտուտում, իսկ իր կյանքի վերջին 12 տարում Արվեստի ինստիտուտի տնօրենն է եղել: Նա հեղինակ է տասնյակ գրքերի ու մենագրությունների՝ նվիրված գրականագիտությանը, թատերագիտությանը, լեզվաբանությանը: Հախվերդյանը հեղինակ է նաև թարգմանությունների, հրապարակախոսական, գրական ու թատերական քննադատական բազմաթիվ հոդվածների:

Լևոն Հախվերդյանի մասին իրենց հուշերը պատմեցին ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի տնօրեն Արարատ Աղասյանը, ակադեմիկոս Վարդգես Չարությունյանը, Գրականության ինստիտուտի տնօրեն Ազատ Եղիազարյանը, ՀՀ թատերական գործիչների միության նախագահ Երվանդ Ղազանչյանը: Կարդացվեց ակադեմիկոս Սիլվա Կապուտիկյանի ուղերձը: Ապա իր շնորհակալական խոսքը հայտնեց Լևոն Հախվերդյանի որդին՝ Ռուբեն Հախվերդյանը:



Վերջին օրերին Ռուբեն Հախվերդյանը:

Նշենք նաև, որ վաստակաշատ ակադեմիկոսի 80-ամյա հորեկանին նվիրված կազմակերպվել էր գիտաժողով:

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի տնօրեն Արարատ Աղասյանի «Մարտի, ազնիվ նկարագիր» հոդվածը՝ նվիրված Լևոն Հախվերդյանին, կարդացե՛ք 3-րդ էջում:

Նամքը հույս է ներշնչում

Իմ աթոռը միշտ ինձ
հետ է...

Հովհաննեսը ծնվել է 1967թ.-ին՝ Գյումրիում:

Ազգանունը Լուկյան է, բայց անձնագրում «Լուկյան» ազգանվան «ու» տառի «ւ» մասնիկը չգիտես ինչու չի տպվել, և ազգանունը ստացվել է «Լ ո լ ո յ ա ն»: Իր կամքից անկախ, 2 տարեկանում հիվանդացել է պոլիոմելիտով և զրկվել ինքնուրույն քայլելու կարողությունից: Բայց կատարում է վարժություններ, որոնք անկարող են կատարել շատ ու շատ լիարժեք առողջ մարդիկ: Սովորում է Գյումրիի մանկավարժական ինստիտուտում: Ասում է, թե ուզում է ստանալ հոգեբան-սոցիոլոգի մասնագիտություն, բայց ինստիտուտ ընդունվել է դիպլոմի համար: Չի եղել դեպք, որ հանրապետության նախագահը Գյումրի այցելի ու Հովհաննեսին չհանդիպի: Հունաստանի օլիմպիական խաղերի օրերին հայկական օլիմպիականները Աթենք գնացին և այնտեղից վերադարձան օդանավով, բայց ձեռնունայն: Հովհաննեսը

նաստան գնաց շարժասլավով, եռագույն ու խաղաղության ուղերձը ձեռքին, վերադարձավ՝ հուշամեդալով:


Իմանալով «Կրթություն բոլորի համար» թեմայով լրագրողական աշխատանքների մրցույթի մասին՝ որոշեց մի ուղերձ էլ հղել իր բախտակից հաշմանդամներին: Ուղերձ, որն, ինչպես Սևակը կասեր, արժե մի ապրած կյանք: Ու մի լրագրող՝ Հակոբ Լևոնյան անուն ազգանունով, գրի առավ Հովհաննեսի մտքերը, օգնեց հրապարակել դրանք:

Հովհաննեսը կրթության մասին

Նախքան 88-ի երկրաշարժը սպորտլուսինի կրպակում էի աշխատում: Լինում էր, որ լուսնի տոմսը սահմանված (այն ժամանակ՝ պետական) գնից մի փոքր թանկ էր վաճառում: Մի օր կրպակին մոտեցավ մի ռուս տղամարդ և լուսնի տոմս խնդրեց: Խիստ վրդովվեց, երբ իմ սահմանած գինը պահանջեց: Նախ փրփրեց, հոխորտաց, թե միլիցիա կտա: Բայց, երբ վեճը բավական «տաքացավ», ու ռուսը կրպակ մտավ, տեսնելով

ինձ՝ սայլակի վրա նստած, «փուշը թողեց»: Լեզվակոնիկը փոխվեց համով գրույցի: Պարզվեց, որ Օրյոլ քաղաքի համալսարանի ռեկտորն էր: Ոչ միայն լուսնի տոմսի՝ իմ պահանջած գնից մի բան էլ թանկ վճարեց, այլև առաջարկեց ընդունվել Օրյոլի համալսարան: Այն ժամանակ շատ քահել էի, մերժեցի առաջարկը՝ պատճառաբանելով, որ կրթությունս 8-ամյա է: Խորհրդային կրթական համակարգը հաշմանդամին միջնակարգ կրթություն ստանալու հնարավորություն չէր տալիս, մանավանդ ես տնային ուսուցման ենթակա էի: Դպրոցս 5-երով ավարտեցի՝ տանը: Այն ժամանակ բարձրագույն կրթություն ստանալու մեծ խոչընդոտ ունեի: Ամբողջ բացը լրացրել եմ ինքնակրթությամբ՝ կյանքի դպրոցում: Այսօր, որքան ինձ է հայտնի, հաշմանդամը նման խնդիր չունի, հնարավորություն ունի ստանալ և՛ միջնակարգ, և՛ բարձրագույն կրթություն:

Նախանցած տարի ընդունվեցի բուհ՝ սոցիոլոգ Լյուդմիլա Հարությունյանի հիմնած հոգեբանության և սոցիալական քաղաքականության ինստիտուտ, որը



Գիտնականի հոբեյվանը

Ֆոթելյարին շնորհավորեցին ակադեմիկոսներ Զ. Սարգսյանը, Կ. Ջաքարյանը, Յու. Սարգսյանը, Ե. Առաքելյանը, Ա. Բարսեղյանը, Յու. Շուքրույանը, Լ. Աղալովյանը, թղթա-
կից-անոթամետ Ա. Շահինյանը և Գ. Գեորգյանը:

Նարինե ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ նախագահությանը ներկայացնել առաջարկներ ինստիտուտի դաշտային-հետազոտական աշխատանքների ֆինանսավորման, տրանսպորտային տնտեսության նորացման, նյութատեխնիկական բազայի ամրապնդման և հնագիտական հանգրվանների մշակայնության ու նորոգման վերաբերյալ:

Տե՛ս հաջորդ համարը:

ՀԻՇԵՑՈՒՄ. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԿԱՆՆԵՐԸ՝ 25 ԲԱՌՈՎ

Ակադեմիայի մեծարգո գիտնականներ, ակադեմիկոսներ և թղթակից անդամներ: Մեր թերթը իր N 9-ում Ձեզ էր դիմել արձագանքելու, կարծիք հայտնելու մեր ժողովրդի կրթության կարևորագույն խնդրին՝ վերաբերող օպտիմալացման ծրագրի մասին: Այդ խնդրի մասին մենք հաճախ ենք

լսում կարծիքներ և դրանք համադրելու, որոշակի դարձնելու կարիքն ունեն: Այդ նպատակով էլ մենք հրապարակեցինք «Գրականության դասականները՝ 25 բառով» հոդվածը: Առայժմ արձագանքները բանավոր են. սպասում ենք ձեր գրավոր կարծիքներին:



ԽՈՍՔ ԼԵՎՈՆ ՀԱԽՎԵՐԴՅԱՆԻ ՄԱՍԻՆ



Փարիզ, Լուվր. «Աֆրիկացու դիմաքանդակ»



Ավինյոնի քաղաքական փառատոնի ազդագիրը

⇒ 2 էր, ինքը՝ լսում: «Երբ լրացավ իմ 10 տարին, 1934-ի դեկտեմբերի 26-ին, հայրս մի մեծադիր հատոր ընծայագրեց ինձ՝ «Հովհաննես Թումանյան. Գեղարվեստական երկեր (խմբագրությամբ Եղիշե Չարենցի)», որ մինչև հիմա էլ իմ գրադարանում պահում եմ սրբությամբ: Կարդում եմ ու չեմ հագեցնում...» (2000թ., 1 սեպտեմբերի):

Ի՞նչ իմանար Հախվերդյանը, որ իր «կարապի երգը» նույնպես նվիրվելու էր Ամենայն հայոց բանաստեղծին՝ 2000թ. տարեմուտին լույս տեսավ «Թումանյանը և հայոց պատմական ծակատագիրը», և այլևս առիավետ լռեց Հախվերդյանի քնարը: Իսկ մինչ այդ, դեռ 1966-ին հրատարակվել էր «Թումանյանի աշխարհը» ծավալուն մենագրությունը՝ Հախվերդյանի ծանրակշիռ ներդրումը հայ գրականագիտության ասպարեզում:

Ակադեմիկոսի ժառանգության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում «Զրույցներ հայոց լեզվի մասին» աշխատությունը. հրատարակվելով 3 անգամ (1982, 1986, 1993) սա իրապես դարձավ ընթերցողներից շատերի սեղանի գիրքը: Խոստովանեմ, որ տողերիս հեղինակը, ռուսական կրթություն ունեցող կերպարվեստի մասնագետս, մեծապես պարտական եմ «Զրույցներ հայոց լեզվի մասին» գրքին և Հախվերդյանի հետ ամենօրյա շփումներին, որ գիտակցեցի հայոց լեզվի հարստությունն ու գեղեցկությունը և միտվեցի մայրենի լեզվին՝ հետադարձ դրանից երբեք չհրաժարվելու հաստատ մտադրությամբ:

Հախվերդյանի բազմադրյունը գործունեության անբաժան մասն է հրապարակախոսությունը: Իր ժողովրդի իսկական զավակը ծաշակեց հարազատ ժողովրդի պատմության մոայլ ու դժիսեմ ժամանակահատվածի դառնության բաժակից: «Անլույս, անժպիտ ու ցրտահար ժամանակներում, երբ մարդկանց ամենից քիչ հետաքրքրում էր գեղարվեստական մշակույթը և ամենից շատ՝ ժողովրդի դժվարին կացությունը, ես նետվեցի հրապարակախոսության ասպարեզ»: Երբեմն զոհաբերելով իր թանկագին ժամանակը, շատ դեպքերում՝ գիտական աշխատանքի հաշվին, նա հանդես եկավ սրտացավ, կրքոտ ու շիտակ խոսքով, որպես ազնիվ քաղաքացի և ծնաբխ հայրենասեր:

Թեև դառնացած երկրի անուրախ, ծանր կացությամբ և վաղվա աղոտ ծակատագրով, տագնա-

պած մշակութային ու բարոյական խոր ճգնաժամով, վշտացած ահռելի չափերի հասնող արտագաղթով և Հայաստանի հայաթափումով, նա չընկճվեց երբեք, մնաց միշտ կատակասեր ու լավատես: Հախվերդյանն ուներ կյանքի առողջ ընկալում, գիտեցավով և տեսնելով կյանքի արհավիրքները, տգեղությունները, չարությունները, դրանցով ներքուստ մորմոքվելով հանդերձ, նա լավատես էր: Բարության և Արդարության վերջնական հաղթանակի հավատով կյանքի տառապանքները հաղթահարելու կամքը նրա գործունեության տիրական մշանաբանն էր: Նա այն հազվագյուտ մարդկանցից էր, որ անձրևից հետո առաջացած պղտոր ջրափոսերում տեսնում էր նաև աստղաշատ երկնքի արտացոլանքը...

Հախվերդյանը հավատում էր ազգային մշակույթի կենսունակությանը: «Այն օրը, - խոստովանել է նա, - երբ կորցնեմ այդ հավատը, կուզեմ ամեն ինչը մեռնել»: Հայ արվեստը ոգի է, ուժ է և լույս, և այդ երկնային լույսի ջահակիրներից մեկն էլ Լևոն Հախվերդյանն էր: Ամենամաշվ օրերին անգամ, երբ երկիրն ընկղմված էր թանձր խավարի մեջ, նա կարողացավ պահպանել իր նախորդի՝ ինստիտուտի հիմնադիր-տնօրեն, ակադեմիկոս Ռուբեն Ջարյանի ստեղծած գիտական և բարոյահոգեբանական մթնոլորտը, համալրեց ինստիտուտը երիտասարդ և խոստումնալից կադրերով:

Բազմադիմի հատկություններով օժտված բացառիկ անձ էր Հախվերդյանը, էականապես արվեստագետ: Սիրում էր երաժշտություն, պաշտում էր գն ու նվագը: Չեմ մոռանում նրա հետևյալ խոստովանությունը, որ լսել եմ շատ ու շատ անգամներ. «Նախանձում եմ այն տղամարդուն, որ համարձակ կարող է մոտենալ դաշնամուրին և ազատորեն նվագել ինչ կկամենա»:

Իբրև մարդ նա վերին աստիճանի ազնիվ ու մաքուր նկարագիր ուներ: Նախանձի, փոքրոգության և հիշաշարության բացարձակապես անկարող. իր աշխատակիցներից որևէ մեկի հաջողությունը նրան միայն հրճվանք էր պատճառում: Նախանձախնդրությամբ էր ծանոթանում նրանց գրվածքներին, ուշադիր ընթերցում և լուսանցքներում նշումներ անում, հիանում գիտական խիզախումներով: Իսկ

նեղության մեջ հայտնված, օգնության կարոտ ծանոթ կամ անծանոթ մարդկանց ծառայություն մատուցելը նրա համար միանգամայն բնական էր:

Եվ այդ բազմափնտր անձնավորությունը պարզ, համակրելի, մարդասեր, առատաձեռն, առակախոս ու զվարճաբան անձ էր. խոսքը միշտ համեմված կատակներով, լուսավորված՝ ճաշակավոր ու նուրբ սրախոսություններով:

Հախվերդյանի անձից արտածորող բարոյական հրապույրն անդիմադրելի էր: Հրապույր, որ կազմված էր մի շարք տարրերի մեկտեղումից. մտքի խորություն և սրամիտ, զվարթ կատակաբանություն, խոսելու նախանձելի շնորհք և շարադրանքի զարմանալի բարեձևություն, համեստություն ու եղբայրական մեծահոգություն՝ զուգակցված ներքին արժանապատվության հետ, ինչն անկեղծ պատկանանք ու սեր էր ներշնչում բոլորին:

Հախվերդյանն ապրեց հպարտ, ընթացավ անսայթաք և անմնացորդ ծառայեց Հայրենիքին ու ժողովրդին:

Լրանում է Հախվերդյանի ծննդյան 80-ամյակը: Նրա հոբելյանը մենք նշում ենք, ցավոք, առանց Հոբելյարի: Այսօր նա մեզ հետ չէ, սակայն նրա հոգին թևածում է Արվեստի ինստիտուտի կամարների տակ և համոզվում, որ իր բացակա ներկայությամբ գիտական հարազատ օջախը շարունակում է գործել՝ վառ պահելով հախվերդյանական բարի ավանդույթները:

Հախվերդյանի հիշատակին է նվիրված հոբելյանական այս գիտաժողովը՝ պարտադրված մարդկային ամենանվիրական զգացումով՝ երախտագիտությամբ, որին իրենց հարգանքի տուրքն ու մասնակցությունն են բերել ինստիտուտի գրեթե բոլոր գիտնականները, նաև պատկանելի մտավորականներ հանրապետության այլևայլ գիտական կենտրոններից:

Հավարտ խոսքիս, ուզում եմ մեջ բերել Թումանյանի բանաստեղծական հայտնի տողերը, որոնք հաճախ էր կրկնում Լևոն Հախվերդյանը.

Գործն է անմահ, լավ իմացեք,
Որ խոսվում է դարեդար,
Երևնի նրբան, ով իր գործով
Կապրի անվերջ, անդադար:


ԱՐԱՐԱՏ ԱՂԱՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի
յոնթին

ԳԱՌՆԻ ԵՐԿՐԱՖԻԶԻԿԱՅԻ ԴԻՏԱՐԱՆԸ՝

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑ

ԹՈՒՆԵԼԱԽՈՐՇՈՒՄ ԱՆԴՈՐՐ ԶԷ.

ԱՇԽԱՏՈՒՄ ԵՆ ԶԳԱՅՈՒՆ ՍԱՐՔԵՐԸ



1948 թվականին, Աշխաբադի ավերիչ երկրաշարժից հետո, ականավոր երկրաշարժաբան Գ. Ա. Գամբուրցկի նախաձեռնությամբ հիմք դրվեց երկրաշարժերի կանխանշանների որոնման հետազոտական աշխատանքներին: Սակայն 60-ական թվականներին, շոշափելի արդյունքների բացակայության պատճառով, ուսումնասիրությունները դադարեցվեցին, ինչը մասնագետների մի զգալի մասի մոտ առաջ բերեց հոռետեսություն խնդրի լուծելի լինելու նկատմամբ:

1966-ին Ուզբեկստանի մայրաքաղաք Տաշքենդին սեյսմիկ տարերքի պատճառած վիթխարի ավերածություններից հետո, ինչպես նաև կապված մոլորակի քաղաքների աճի, խոշորացման, մարդկային ու նյութական ռեսուրսների աննախադեպ կենտրոնացման հետ, նորից առաջնահերթ դարձավ երկրաշարժերից պաշտպանվելու հիմնահարցը: Այս ոլորտում առանձնակի կարևորություն ձեռք բերեցին երկրաշարժերի կանխատեսման և ընդհանրապես ընդերքում ընթացող երևույթների բացահայտման և վերահսկման խնդիրները:


Բնական է, մեր հանրապետությունը, որի տարածքը գրեթե ամբողջովին գտնվում է երկրաշարժամետ գոտում, չէր կարող հեռու մնալ տնտեսական և սոցիալական առումով այս գիտագործնական բացառիկ կարևորության հիմնահարցերից: Հայաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիայի ղեկավարության ջանքերով ստեղծվեց Գյումրիի երկրաֆիզիկայի և ինժեներական սեյսմաբանության ինստիտուտը, որը նշանակալից ձեռքբերումներ ունի հատկապես կառուցաբանական երկրաշարժաբանության ոլորտում՝ ուղղված երկրակեղևի սեյսմիկ առանձնահատկությունների բացահայտման, ինչպես նաև երկրաշարժերի օջախների ֆիզիկայի ուսումնասիրություններում:

Անհրաժեշտություն առաջացավ հանրապետության տարածքում ունենալ մշտական գործող բազմապարամետրային ու բարձր ճշգրտություն ապահովող երկրաֆիզիկական դիտարան, ինչը իրականություն դարձավ 1982 թվականին, Երևանից ոչ հեռու Գառնիի բնակավայրի մոտակայքում Գառնիի երկրաֆիզիկական դիտարանի (ԳԵԴ) գործարկումով:

Իր հարմարավետությամբ ու հնարավորություններով ԳԵԴ-ը ցայսօր բացառիկ է ամբողջ տարածաշրջանում: Դիտարկումների օբյեկտիվությունն ու ճշգրտությունը, նրանց տեղեկատվական ծանրաբեռնվածությունը, արտաքին «աղմուկներից» պաշտպանվածությունը պայմանավորված են դիտարանի ստորգետնյա կառույցներով, որոնք ունեն գունարային 375

գծային մետր բունելի երկարություն և առանձնացված թվով 10 ստորգետնյա սրահ-լաբորատորիաներ:

Կարճ ժամանակահատվածում տեղադրվեցին լեռնային ապարների այլաձևափոխություններին ու տեղադրման բեքություններին հետևող գերզգայուն սարքեր (ծողային դեֆորոմոգրաֆ, լազերային ինտերֆերոմետր), ուղղաձիգ և հորիզոնական լայն տիրույթի սեյսմիկ տատանումներ գրանցող ընդունիչներ, ծանրության ուժի արագացման մեծությունը գնահատող գերձգրիտ ծանրաչափ: Վերջինս հնարավորություն



ընձեռեց հետևել օրական և ավելի երկարատև գրավիտացիայի մակընթացային փոփոխություններին:

Կազմակերպվեցին երկրի մագնիսական դաշտի հիմնական բաղադրիչների վերգետնյա դիտարկումներ պրոտոնային մագնիսաչափերի միջոցով, որոնք գիտագործնական լայն կիրառում ունեն:

Սկսվեցին երկրի էլեկտրական ու էլեկտրամագնիսական դաշտերի տևական ուսումնասիրությունները, որոնք հանգեցրին սեյսմիկ իրադարձություններին նախորդող երկրաբանական միջավայրերի էլեկտրաառածական ու մագնիսաառածական երևույթների բացահայտմանը:

Միաժամանակ Գառնիի երկրաֆիզիկական դիտարանը ստանձնեց Արարատյան երկրաշարժականիատեսումային փորձադաշտի կայանները համակարգող գիտական կենտրոնի դերը, որը ներառում էր Երևան քաղաքը, Սեծամորի ատոմակայանի և Գառնիի դիտարանի տարածքները:

Չնայած 90-ականների գրեթե անհաղթահարելի թվացող դժվարություններին, ԳԵԴ-ը չդադարեց իրականացնել դիտարկումները՝ թեկուզև որոշակի ընդհատումներով և գրանցվող չափորոշիչների կրճատումով:

Պահպանվեցին վերգետնյա և ստորգետնյա շիճուկությունները, գլխամասային և օժանդակ շենքերը, ընդհանուր տարածքը:

1996 թվականից սկսվեցին դիտարանի շրջապատի երկու ստորգետնյա աղբյուրների («Գոհար», «Անահիտ»), իսկ 1998 թ.-ից Գառնիի ծորում «Գրավ» հանքային ջրի էլքի ջրաերկրաքիմիական մոնիտորինգային ուսումնասիրությունները, որոնք հարելով Գառնիի երկրաբանական բեկվածքին, բերում են հետաքրքիր վկայություններ՝ տարածքի երկրադինամիկ երևույթների վերաբերյալ:

1990 թվականից ստորգետնյա սրահներից մեկում տեղադրված է Միջազգային գլոբալ ցանցի մաս կազմող ամերիկյան YRYS համակարգի սեյսմակայանը, որն ամբողջությամբ սպասարկում է վերոհիշյալ ցանցին հետևելով ինչպես սեյսմիկ բնական ցնցումներին, այնպես էլ հզոր պայթեցումներին (սպասարկվում է ՍՊԱԾ-ի կողմից):

Այժմ դիտարանում տարվում են աշխատանքներ որոշակի երկրաֆիզիկական չափորոշիչների դիտարկումների վերականգնման, մի քանի սարքերի արդիականացման, ինչպես նաև գրանցված տվյալների հավաքման, մշակման ու պահպանման արդիական տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ:

Նախատեսվում է նաև դիտարանից ոչ հեռու գտնվող 3500 մ խորությամբ Ազատ-1 հորատանցքը ներառել դիտարկումների գործող ցանց, ինչը նոր հեռանկարներ կբացի ստորգետնյա դիտարկումների ներկայացուցչականության բարձրացման առումով:

Հարկ է նշել, որ երկրաշարժամետ գոտիներում երկ-

րակեղևի կառուցվածքի և նրանում ընթացող երևույթների ուսումնասիրությունների ներկայիս մակարդակը դեռևս բավարար չէ խնդրին վերջնական լուծում տալու համար: Մյուս կողմից, որքան փոքր է ուսումնասիրվող տարածքը կամ ուժեղ է երկրաշարժը, ավելի դժվար է դառնում անհրաժեշտ տվյալների բավարար քանակի կուտակումը գիտական կանխատեսման համար:

Այդ կապակցությամբ առանձնակի կարևորություն է ստանում տարածաշրջանային երկրների գիտական կենտրոնների միջև տվյալների փոխանակումն ու համագործակցությունը, գիտական մտքի ինտեգրումը:

Պատահական չէ, որ ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտը և «Գեոհիսկ» գիտահետազոտական ՓԲ ընկերությունը, ակադեմիայի նախագահության հովանավորությամբ, ձեռնամուխ են եղել Գառնիի երկրաֆիզիկական դիտարանի հենքի վրա Միջազգային գիտական կենտրոնի ստեղծմանը՝ օգտագործելով Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի խողովակները (նախագիծ A 999):

Ներկայումս ընթանում են բանակցային գործընթացներ ՍՀՏԿ-ի ու շահագրգիռ երկրների համապատասխան գիտական կենտրոնների Ռուսաստանի Դաշնության, Վրաստանի, Ադրբեջանի, Թուրքիայի, Իրանի, Տաջիկստանի ու Ղազախստանի հետ: Ծրագրին մաս-



նակցում են նաև դոմոր երկրները Հունաստանը, Իտալիան, Ֆրանսիան, ԱՄՆ-ը:

Ըստ նախնական պատկերացումների, յուրաքանչյուր մասնակից երկիր պետք է ունենա իր տեղեկատվության հավաքման, մշակման ու պահպանման կենտրոնը: Գառնիի գիտական կենտրոնին ավտոմատ կապուղիներով փոխանցվում են առավել կարևոր տեղեկատվություններ: Համապատասխան մշակումից հետո Գառնիի կենտրոնը վերադարձնում է տեղեկությունը մասնակից կենտրոններին: Այսպիսով, ամբողջ տեղեկատվությունը պահպանվում է տեղական սկզբնական կենտրոններում, իսկ տարածաշրջանային կենտրոնները ազատվում են ստորադաս տվյալները հավաքելուց:


Գառնիի գիտական կենտրոնը նպաստում է դիտարանների մեթոդական ու մետրոլոգիական միասնականությանը, սարքերի ճշգրտության և դիտարկումների կազմակերպման մույնատիպ մակարդակի հաստատմանը, սեյսմիկ ռեժիմի տարածաշրջանային գնահատմանը, օպերատիվ գնահատումների փորձագիտությանը, ինչպես նաև կազմակերպում է գիտական կադրերի փոխանակումն ու վերապատրաստումը:

Կազմակերպչական առաջին փուլի գործընթացները վստահություն են ներշնչում ծրագրի կենսունակության և իրատեսության նկատմամբ:

Լեոնիդ ՀԱՄԵՐԳՅԱՆ
Գառնիի երկրաֆիզիկական
դիտարանի տնօրեն



Գառնիի մեծ խզվածքը



Այսօր դժվար է պատկերացնել գիտության զարգացումը առանց հաշվիչ տեխնիկայի: Առավել դժվար է հետազոտական, հրատարակչական, խմբագրական աշխատանքը առանց համակարգիչների, կոմպյուտերային ու ծրագրավորող սարքերի: Իհարկե, բացառություններ կան, ասենք «Գիտություն» թերթը: Եթե հավատանք անվանը, այն պետք է հազեցած լիներ տպագրական ամենամանակակից տեխնիկայով, մինչդեռ այն «հազեցած» է միայն խիստ ժամանակակից խոստումներով ու տեխնիկական հազեցվածության մասին որոշումներով: Իհարկե, հաճելի է լինել միակը: Եվ մենք միակն ենք մեր հանրապետությունում, որ չենք քիչ-չենք վազ տալով թերթ ենք հրատարակում: Մի տեղ շարվածք են անում, մյուս տեղը՝ ձևավորում, երրորդ տեղը՝ տպագրում խիստ գիտական խորագրով մեր թերթը: Իսկ աշխարհում... Ահա տեսնում եք ժամանակակից տեխնիկայով հազեցած այս սրահը: Անշուշտ, այն եվրոպայում է և այն էլ՝ ոչ ամենակատարյալը: Սպասենք և հուսանք, հայկական միջավայրը միշտ աչքի է ընկել անակնկալներով:



Ռիտչի Ռ. ՈՒՈՐԴ. Սահմանի ինստիտուտի բույսավորչաբան

ԲՆՈՒԹՅԱՆ ԱՌԵՂԾՎԱԾԱՅԻՆ ԲՈԼՈՐԱՇՐՋԱՆՆԵՐԸ

(Սկիզբը՝ նախորդ համարում)

Կենսաբանների միջև դեռևս շարունակվում են վիճաբանություններ այն մասին, թե ո՞ր գործոններն են առաջին հերթին սահմանում բույսերի և կենդանիների կենսաօրինակները՝ ներքին, թե արտաքին:

Միսս Շերկը խոսքը դարձյալ շարունակեց ժամանակային անսովոր ցիկլերի մասին:

- Երկամյա ցիկլերը, օրինակ, բնավ անսովոր չեն, բայց չգիտես ինչու, մարդկանց, որոնք միանգամայն ընտելացած են մեկ-տարյա ցիկլերին, մտային վիթխարի ջանքեր են պետք, որպեսզի պատկերացնեն երկամյա կամ կեստարյա ցիկլը, չնայած որ ցիկլերը պակաս ռեալ չեն: Միաժամանակ մարդիկ հեշտությամբ ընդունում են, որ իրենց կյանքում մեկը մյուսին փոխարինելով կրկնվում են վատ և լավ օրերը:

Անհատի ֆիզիկական և զգայական ինքնագզացման ցիկլերը, որոնք այժմ անվանվում են կենսաօրինակներ, շատ լրջորեն է ընդունվում ԱՄՆ-ի և ճապոնիայի ավիաուղիների և գործարարների կողմից: Նույնիսկ հայտնվեցին ոչ մեծ հաշվիչներ, որոնց օգնությամբ կարելի է հաշվարկել, թե երբ է մեզ համար վրա հասնելու վատ կամ լավ օրերի պահը:

1971 թվականին Դյուին հրապարակեց իր աշխատանքի 4 էջանոց համառոտ արդյունքները: Գիրքը կոչվում է «Ինչու է պետք ուսումնասիրել ցիկլերը»: Այդ գրքից հետո մեծ հիմնավորում է իր այն համոզմունքը, թե ցիկլերի մեծամասնությունը առաջանում է արտաքին ուժերի ազդեցությունից (որքան էլ դժվար չէ նրանք բացահայտել), և պարզաբանում է, թե որքան կարևոր է այդ ցիկլերի գաղտնիքի մեջ ավելի խոր թափանցելը:

Նա պնդում է, որ ցիկլերը չեն կարող պատահական լինել, քանի որ վիճակագրական տեսքերը ցույց են տալիս այդ ուսումնասիրվող ցիկլերի պատահականությունը: Մեկը 20 կամ մոտ 100 և 1000 անգամ: Օրինակ 9,2 տարվա ցիկլը, որը դրսևորվում էր սովորական արժեքների կուրսից, կարող է ծագել պատահականորեն լոկ 5000 անգամ մեկ:

Դյուին նշում է, որ ցիկլերը կրկնվում են ծայրահեղ կանոնավորությամբ, անընդհատ: Օրինակ, կանաչական հաղաղձվիկանոսյան երկաթուղով բեռնափոխադրումների 9,18-ամյա ցիկլը կրկնվում է 49 անգամ:

Սովորաբար ցիկլերը կրկնվում են դարձյալ ու դարձյալ, այն ամբողջ ժամանակի ընթացքում, որի մասին թվային տվյալներ կան: Ընդ որում ցիկլերի տևողությունը (նրանց պարբերությունները) գործնականում մնում է անփոփոխ, անկախ այն բանից, թե ժամանակի ո՞ր հատվածի մասին է տվյալներ վերցվում: Այսպես, խոշոր ճակատամարտերի ցուցանիշը վկայում է 11,2-տարյա ցիկլի մասին,

որը կրկնվում է սկսած մեր թվարկությունից առաջ եղած ժամանակաշրջանից մինչև մեր օրերը:

Դյուին մատնանշում է, որ ցիկլայնությունը չի խախտվի մույնիսկ պայմանների փոփոխությունից: Այսպես, Անգլիայում կոռած պողպատի գների 16,67 ամյա ցիկլը գոյություն ունի 1288 տարի, այն վերապրեց արդյունաբերական հեղափոխությունը և ողջ ու անվնաս մտավ ատոմային դար: Հասկանալի է, որ իրենց էությանը վիճակագրական ապացույցներ են բերադրում են բացարձակ ճշգրտության բացակայություն: Մենք կարող ենք լոկ որոշել մեր համոզվածության սահմանները յուրաքանչյուր առաջին դեպքում: Դյուին չի կասկածում, որ մեր առաջ ավելի մեծ բան է, քան պարզապես պատահականությունը:

Նրա համար ցիկլայնությունը հիմնարար նշանակության արտակարգ երևույթ (ֆենոմեն) է: Եթե մա իրավացի է, ապա բազմաթիվ երևույթներ, որոնք մինչև այժմ համարվում էին քաոսային և պատահական, կբնութագրվեն կանոնավորությամբ, ճշտությամբ և պարզորոշ հիմքով: Այդպիսի հայտնագործությունը կմանավի անցյալում կատարված այն հայտնագործությանը, թե մոլորակների շարժումը (հունարեն «պլանետա» - թափառական բառից), կամ Մենդելեևի պարբերական աղյուսակի ստեղծումը, միանգամայն ճիշտ է և կանխագուշակելի:

Դյուին խոսքերով, չկա ոչինչ, որ կարողանար առավել կարգավորել ամենատարբեր բնագավառները, սկզբունքներն ու երևույթները, քան ցիկլայնության ուսումնասիրությունը: Եթե այդ ցիկլայնության ուժերը իրականություն են, ապա բնության մեջ գոյություն ունեն ավելի շատ փոխկապակցվածություններ, քան համարվում էր մինչև այժմ: Միևնույն ցիկլերը բացահայտվում են բազմաթիվ բնական և սոցիալական դիսցիպլիններում: Ցիկլայնությունը ենթադրում է ամբողջականություն, ի հակակշիռ գիտության ավելի ու ավելի մանր բնագավառների բաժանման ցանկության:

Դեպքը, որ Դյուին առաջին անգամ այդ ցիկլերը ուսումնասիրելու առիթ տվեց, կատարվեց 30-ական թվականների սկզբներին: Այն ժամանակ մա տնտեսագիտության վիճակագիր էր ԱՄՆ-ի մաթեմատիկոսներից մեկը: Այնպես պատահեց, որ մա ծանոթացավ Իլի համալսարանի պրոֆեսոր Էլտուրոտ Ջանտինգտոնի 1931 թվականին կանոնային անցկացված կոնֆերանսի արդյունքների վերլուծությանը: Այդ կոնֆերանսի մասնակիցների ուշադրությունը ուղղված էր այն ժամանակ կենսաբաններին արդեն լավ հայտնի արդյունահանվող կենդանիների քանակի ցիկլայնությանը:

Դյուին անմիջապես նկատեց այդ ցիկլերի և տնտեսական տատանումների միջև եղած նմանությունը, որը վաղուց փորձում էր հասկանալ: Այսպես մա գտավ այն,

ինչը դարձավ իր կյանքի նպատակը:

1940 թվականին, համառ աշխատանքներից հետո Դյուին հաջողվեց կազմակերպել ցիկլերի ուսումնասիրության Ֆոնդը: Նրան հաջողվեց Բոստոնի ֆինանսիստներից մեկին Կոպլի էյմուրին, համոզել գոհաբերել իր առաջին 500 դոլարը, որովհետև նրան չափազանց հետաքրքրում էր սեփական կանաչական արգելոցում ապրող կենդանիների թվաքանակի փոփոխությունները: Նրա օրինակին հետևեցին այլ նշանավոր ավանդատուներ:

Ֆոնդն իր գոյության առաջին տարիներին փոքրաթիվ աշխատակիցներով տարբեր ընկերությունների համար ցիկլայնության հետազոտություններ էր կատարում, բայց Դյուին հասկանում էր, որ դրանցից պետք է հրաժարվել: Բանն այն էր, որ այդ ընկերությունները, սեփականատիրական շահերից ելնելով, հրաժարվում էին արդյունքները հրապարակել, իսկ Դյուին գտնում էր, որ այդ արդյունքները ընկերության պատերի մեջ թաղել, նշանակում է արգելակել գիտության զարգացումը: Ուստի մա Ֆոնդը դարձեց ոչ կոմերցիոն, ոչ վաճառքային որակի կազմակերպություն, որն իր գոյությունը պահպանելու էր բացառապես մասնավոր բարեգործություններով: Ճիշտ այդպես ֆինանսավորվում է «Սայլես» ամսագիրը և ավելի գիտական «Ջորնալ-օֆ ինտերդիսցիպլինարի սայլե դիջեստ»-ը:

Քանի որ որոշ թվաշրջաններ, որոնց հետ Դյուին աշխատում է, ձգվում են դեպի մեր բազմադարյան անցյալը և պահանջում են վիթխարի քանակությամբ տվյալների մշակում, վերջերս մա ավելի ու ավելի հաճախ է դիմում ԷՄՍ-ի օգնությանը: Ողջ աշխարհում անասելի չափերով աճել է ցիկլերի մասին գրականությունը: Ֆոնդի կատալոգներում միայն կենսաբանության դիմորի վերաբերյալ 30.000 հոդվածներ են նշված, որոնցից շատերը պահվում են ֆոնդի գրադարանում:

Դյուին չարաշարանքները զնահատվեցին: Նրա բնագավառով սկսեցին զբաղվել երկու բարձրագույն ուսումնական հաստատություն: Հարավիլինոյսի համալսարանում բժշկական ֆակուլտետին առընթեր բացվեց ցիկլերի ուսումնասիրման բաժին, իսկ Պիտսբուրգի համալսարանը ստեղծեց իր սեփական, գիտության տարբեր բնագավառներում ցիկլերի ուսումնասիրության կենտրոն, որի տնօրեն նշանակվեց Դյուին:

Իմ այն հարցին, թե կզբաղվե՞ր մա այլ գործով, եթե կարողանար ամեն ինչ սկսել նորից, մա պատասխանեց.

- Օ, ոչ: Ինձ մշտապես հետաքրքրել են հենց միայն ցիկլերը, և ես զգում էի, որ իրոք կարևոր գործով եմ զբաղվում:

Ես հարցրի, թե՛ ինչպես է պատկերացում ֆոնդի աշխատանքը իրենցից հետո:

- Շատ պարզ: ասաց մա, և նրա աչքերում՝ կայծկլտացին խորամանկ կրակներ, ես պատրաստվում եմ ապրել հավերժ:

Թարգմանությունը՝ Զ. ՉԱՏՆԵՅՆԻ

Գույները մեր կյանքում

Բոլորը գիտեն, որ մարդը բնության տարբեր վայրերում իրեն տարբեր ծնով է զգում: Անտառում, կանաչ դաշտերում, ծաղիկներով լցված մարգագետնում իրեն շատ ավելի առույգ ու կայտառ է զգում, քան գորշ քարապատ ու մոայլ վայրերում: Գիտությանը պարզ է դարձել, որ բնության մեջ գոյություն ունեցող բոլոր մարմիններն ու նյութերը ընդունակ են արձակելու այնպիսի նյութեր՝ ճառագայթներ, կենսահոսանքներ, հոտ, լուսային էֆեկտներ և այլն, որոնք ազդում են կենդանի օրգանիզմների վրա՝ հաճախ ունենալով դրական կամ բացասական ազդեցություն:

Գիտությանը պարզ է դարձել նաև այն կարևոր հանգամանքը, որ մարդու կյանքում կարևոր նշանակություն ունեն գույները: Պարզվել է, որ գունային տարբեր երանգները մարդու վրա ներգործում են տարբեր ձևերով, հաճախ ներգործելով նրա նյարդային համակարգի վրա, բարձրացնելով տրամադրությունը, ախորժակը, աշխատունակությունը և այլն, իսկ որոշ գույներ հակառակը՝ մթազնում են նրա հոգին, զգում տրամադրությունը ու գործելու ունակությունը:

Պարզվել է, որ այդ երևույթների հիմնական պատճառը հանդիսանում են այն ճառագայթները, ինչ արձակում են շրջապատի գույները:

Բնության մեջ գոյություն ունեցող կենդանի օրգանիզմները տեսնում են նշված ճառագայթների շնորհիվ: Միայն դալտոնիկներն են, որ չեն տեսնում այդ գույները կամ դրանց առանձին երանգները:

Պարզվել է, որ տարբեր գույների ու երանգների արձակած ճառագայթները լինում են տարբեր երկարության, այնպես ինչպիսիք հանդիսանում են ռադիոհաճախականության ալիքները: Իսկ ինչպես հայտնի է տարբեր հաճախականության ալիքները տարբեր ազդեցություն են ունենում կենդանի բնության վրա:

Ուսումնասիրելով այդ, գիտնականները պարզել են, որ մարդու կյանքում շատ անհրաժեշտ են ոչ միայն բնության մեջ եղած տարբեր գունավորումները, այլ առաջին հերթին այն վայրերի գունավորումները, որոնցում մարդը լինում է առավել երկար ժամանակ՝ բնակարանը, աշխատասենյակը, աշխատավայրը և այլն: Շատ կարևոր են նաև հագուստները, դրանց գույնը, երանգները, կարվածքի ձևը և այլն:

Այդ նույնը կարելի է ասել նաև վաճառվող ապրանքների արտաքին ձևի, փաթեթավորման գունավորման հատկանիշների մասին, որոնք կարևոր նշանակություն ունեն հատկապես գրավելու, իսկ սննդամթերքները՝ ուտելու համար:

Արտաքին ձևը, գույները և տարբեր նյութերի հատկանիշները ունակ են ազդել մարդու տեսողական օրգանների և հատկապես ուղեղի՝ հոգեբանական կենտրոնների վրա և առաջացնելու դրական կամ բացասական ռեակցիաներ:

Մասնագետների կողմից պարզվել է, որ ԿԱՐՄԻՐ գույնը և նրա երանգները բարձրացնում են մարդու աշ-



⇒ 5 Ինչու է պետք տիեզերքին տարրական մասնիկների այդպիսի մեծ առատությունը: Բազմապիսի քվարկների, լեպտոնների, բոզոնների, ֆոտոնների, մյուոնների գոյության թաքնված տրամաբանության մասին առաջիններից մեկը խորհել է Անդրեյ Սախարովը: Նա ենթադրեց, որ այդ բազմազանությունը տիեզերքում անհրաժեշտ է մյուսի և անտիմյուսի ասիմետրիայի համար: Եթե այդ ասիմետրիան չլիներ, բոլոր մասնիկները կարող էին փոխարկվել այլ մասնիկների, և մեր աշխարհը պարզապես չէր լինի: Միմետրիայի խախտման տեսության զարգացման ոլորտում մեծ ավանդ ունեցավ Լև Լանդաու: Բնության մեջ սիմետրիայի խախտման մեխանիզմը փորձարարական ճանաչարհով հաստատվել է Միացյալ Նահանգներում և ճապոնիայում, և այդ աշխատանքներին մասնակցել են ռուս գիտնականները: Սակայն հիմա պարզվել է, որ տիեզերքում ընթացող այդ պրոցեսների նկարագրման համար այդ մեխանիզմը անկատար է:

Մենք առաջվա պես էլի չենք հասկանում, թե ինչու են պետք քվարկները և լեպտոնները: Ինչ վերաբերում է անտիմյուսին, որը տիեզերքի ծնվելու, առաջացման ժամանակ պետք է լիներ այնքան, որքան մյուսը, ապա անհասկանալի է, թե ուր է կորել այն: Անտիմյուսի որոնումը այսօրվա ֆիզիկայի համագումարին խնդիրներից մեկն է: Արտասովոր Նեյտրինոն հաստատում տեղ է գրավել տարրական մասնիկների ֆիզիկայի ընտրանիների վերին շարքերում: Ըստ որում, 2003 թվականի Նոբելյան մրցանակը շնորհվեց հենց այդ բնագավառում կատարված աշխատանքների համար: Նեյտրինոները, որոնք չեն չանցում զանգվածի շնորհիվ չեն «նկատվում» գրավիտացիան, կարող են տալ այն ինֆորմացիան, որը անհրաժեշտ է միավորելու բոլոր փոխազդեցությունները, որոնք անհասանելի են անգամ ամենահզոր արագացուցիչներին: Երկիր մոլորակ է հասնում ընդամենը մեկ երրորդ մասը Արևի բաց թողած Նեյտրինոներից, որոնք առաջանում են միջուկային թույլ փոխազդեցություններից: Սակայն ճանաչարհի մրանց հետ կատարվում են ամենատարբեր այլակերպություններ: Էլեկտրոնային Նեյտրինոն օսցիլյացիայի (տատանման) հայտնաբերման գործում մեծ ավանդ ունեցան ՌԴ Միջուկային ֆիզիկայի ինստիտուտի Բակսանյան Նեյտրինոնային դիտարանի գիտնականները: Եթե Նեյտրինոն ենթարկվում է օսցիլյացիայի, նշանակում է, որ հակառակ մրան, թե ինչ էին մտածում քվանտային ֆիզիկայի հիմնադիր-հայրերը, Նեյտրինոն ունի մասսա (զանգված): Նյութումը հավատում էր աշխարհի պարզությամբ: «Բնությունը բավարարվում է պարզությամբ և չի սիրում ավելորդ ճոխություն ու պնդանք»:

Ներգել ԼեՆԿՈՎ
«Իզվեստիա»

Եվրոպական նշանավոր գիտնականներից մեկը գրում է. «Մենք ճանաչարհ ենք բաց անում Թորամանյանի թնդանոթների համար»: Այո, դրանք թնդանոթներ են, հայկական թնդանոթներ... որ իրենց հետ տանում են հայ ժողովրդի ստեղծագործական համաձայն ու կարողությունը: Գնում են հայերի համար նվաճելու լուսավոր ազգերի սերն ու համակրությունը, հարգանքն ու հիացումը»:

Հովհաննես ԹՈՒՄԱՆՅԱՆ

Բոլոր ժամանակներում էլ մարդկային կենսագործունեության ոլորտների զարգացումը պայմանավորված է եղել խթանիչ գործոններով, զարգացման նախադրյալներով, ավանդույթներով: Դրանցում որոշիչ դեր են կատարել հզոր անհատները, առաջամարտիկները, որոնք իրենց խորիմացությամբ, օժտվածությամբ, կազմակերպչությամբ, նվիրվածությամբ, հայրենասիրությամբ հուժկու ազդակ են համոզիչացել գիտության, մշակույթի, արվեստի և մյուս բնագավառների զարգացման համար:

Նման անհատները սովորաբար ասպարեզ են գալիս և գործում են երկրի դժվարին ժամանակներում, երբ պետք է լուծում գտնել, դուրս բերել փակուղուց, հասցնել զարգացման մոր աստիճանի: Այն, ինչ ասել է Տորջո Վազարին իտալական վերածնունդի մասին («Իտալիան 14-16-րդ դարերում կարիք ուներ տիտանների, և ծնվեցին այդ տիտանները»), երևի թե, համընդհանուր է բոլոր վերածնունդների, գիտական և քաղաքակրթական թռիչքների համար:

Բարդ իրադրության և դժվարին կացության առաջ էր կանգնած Հայաստան երկիրն ու հայ ծարտարապետությունը 19-րդ դ. վերջին և 20-րդ դ. սկզբներին, երբ մոլեգնում էին արյունալի իրադարձությունները, երկիրը դարձել էր համաշխարհային պատերազմի թատերաբեմ՝ իր դժոխային հետևանքներով, երբ արհամարվում էր հայ ժողովրդի ազգային նկարագիրը, անտեսում նրա ունեցած քաղաքակրթական և մշակութային արգասաբեր ներդրումը:

Եվ այդ դժին ժամանակներում հառնեցին «հայոց տիտանները»՝ Թումանյանը, Կոմիտասը, Մառը, Ամառյանը, Աբեղյանը, Լեոն, Մանանդյանը... և դրանց թվում հայ ծարտարապետության գիտական ուսումնասիրության ռահիվրան՝ Թորոս Թորամանյանը: Նման հզոր անհատների երևան գալն, իրոք, պատմական անհրաժեշտություն էր:

Իր պրակտիկ գործունեությամբ և պատմատեսական աշխատություններով Թորամանյանը մշակեց ծարտարապետական գիտության զարգացման մեթոդաբանական հիմքը, որի ղեկավար մոտեցումները եղան փաստական նյութի վրա հիմնվելը, տվյալների համակողմանիությունը, հարակից բնագավառների ընդհանուրների ներառումը: Նա հիմնավորապես մշակեց հայ ծարտարապետության ծագման, զարգացման, փոխազդեցության խնդիրները, զարգացման շրջանները (վերածնունդները), դարաշրջանային հատկանիշները, կառույցների տիպաբանությունը, կապը ժողովրդական ակունքների հետ:

Զվարթնոցի եկեղեցու ուսումնասիրություն

ԹՈՐԱՄԱՆՅԱՆԻ «ԹՆԴԱՆՈՒՅՆԵՐԸ»

Ն և հայ ծարտարապետության մեջ աննախադեպ, ներդաշնակ ամբողջություն կազմող եռաստիճան, արխիտեկտոնիկ հորինվածքով հոյակապ վերակազմությունը Թորամանյանի ամենամեծ սխրանքն է, որն իր փառահեղ տեսքով աշխարհին է ներկայացնում արարիչ արվեստագետի խորաթափանց մտքի, անեզր երևակայության ու վառ անհատականության կնիքը: Գիտնականը ուսանելի և դասական օրինակ տվեց ծարտարապետական հուշարձանի բացահայտման, նախաստեղծ կերտվածքի վերակազմության, գիտապրակտիկ և տեսական եզրահանգումների, ինչը եղավ ուղեցույց նյութական մշակույթի հետազոտությանը լծված սերունդների համար:

Կյանքը նվիրաբերելով իր փայլալից գործին՝ նա փլատակների և մոռացումի փոշիների տակից հանեց և վերակենդանացրեց ոչ միայն Չվարթնոցը, այլև միջնադարյան շատ այլ կառույցներ՝ եկեղեցիներ, պալատական շենքեր, հյուրատներ, կացարաններ, քարավանատներ, կամուրջներ, որոնք հայ ծարտարապետության տարեգրության մեջ են մտել բացառապես գիտնականի բացահայտումների շնորհիվ:

Թորամանյանի գործունեությունը հատկապես արդյունավետ եղավ 1905-09 թվականներին, երբ Ն. Մառի արշավախմբի կազմում մասնակցում էր հայոց հին մայրաքաղաքի՝ Անիի, պեղումներին: Ծարտարապետն իր գործերով, նաև իր մարդկային պարզ ու շիտակ նկարագրով արագ արժանացավ լայն ճանաչման: Տիրապետելով հին հուշարձանների խոստովանմանը. «Ինձ կըսեն մարդավարի հազմիկ, այսպես կա-րելի չէ: Կհասկանամ... բայց, յափովմ, ես ժամանակ ունիմ՝ դեմծակներում թով եթթալ-գալու... Աչքերուս առջև սրբազան Անիին հոյակապ կորոզները կսլանան առ Աստված իրենց աղերսական վիճակով, Չվարթնոցը կխոյանգար, Տեկորի ավերակները սիրտս կհոշոտեն... Ստոնց վերստեղծումն էր կենացս երազանքը...»:

Թորամանյանն ընդգրկեց ծարտարապետական գիտության բոլոր կարևորագույն խնդիրները՝ խորությամբ և լայնքով, հիմնվելով ոչ միայն կենտրոնական Հայաստանի, այլև ողջ համախալկական ծարտարապետության տվյալների և ընդհանուրների վրա: Ընտրեց ամենաբազմապիսի և ամենաբազմաբնույթ կառույցները՝ պաշտամունքային, աշխարհիկ, հուզային, ամրաշինական և այլն, անդրադառնալով դրանց համակողմ ծարտարապետական-քաղաքաշինական, գեղարվեստական, կառուցվածքային, հուսալիության, դիմացկունության և այլ խնդիրներին: Գիտնականի արտահայտած կարծիքներն ու եզրահանգումները հիմնված են առավելապես փաստական նյութի, վավերական աղբյուրների վրա՝ արդյունք այն բանի, որ նա իր հետազոտական գործու-

ն են միջուկային թույլ փոխազդեցություններից: Սակայն ճանաչարհի մրանց հետ կատարվում են ամենատարբեր այլակերպություններ: Էլեկտրոնային Նեյտրինոները փոխարկվում են մյուոնայինի և, նույնիսկ՝ Տաու-Նեյտրինոյի: Նեյտրինոյի օսցիլյացիայի (տատանման) հայտնաբերման գործում մեծ ավանդ ունեցան ՌԴ Միջուկային ֆիզիկայի ինստիտուտի Բակսանյան Նեյտրինոնային դիտարանի գիտնականները: Եթե Նեյտրինոն ենթարկվում է օսցիլյացիայի, նշանակում է, որ հակառակ մրան, թե ինչ էին մտածում քվանտային ֆիզիկայի հիմնադիր-հայրերը, Նեյտրինոն ունի մասսա (զանգված): Նյութումը հավատում էր աշխարհի պարզությամբ: «Բնությունը բավարարվում է պարզությամբ և չի սիրում ավելորդ ճոխություն ու պնդանք»:

Պարզ աշխարհը, որ կառուցել էր Նյութումը, բարդացվեց Էյնշտեյնի կողմից: Սակայն պարզվեց, որ Էյնշտեյնի բարդացված աշխարհն էլ չափազանց պարզունակ է, և դեռ դրան պետք է ավելացնել ու ավելացնել մոր բարդությունները: Ինչպես երևում է, պարզությունը դեռևս ճշմարտության հոմանիշ չէ: Գուցե այն դարձվածքը, թե ամեն մի համաձայնություն շատ պարզ է, կարող է և սուտ է:

Ներգել ԼեՆԿՈՎ
«Իզվեստիա»

Անհող մշակույթի գիտական հիմունքները

Լսելով ՀՀ ԳԱԱ Գ. Ս. Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտի տնօրեն Ս. Մայրապետյանի և ստուգող հանձնաժողովի նախագահ, ակադեմիկոս Լ. Օսիպյանի զեկույցները, ՀՀ ԳԱԱ նախագահությունը նշում է, որ ինստիտուտում կատարվում են արդիական հիմնարար և կիրառական բնույթի հետազոտություններ՝ բանկարծեք, փոքրատոն-նաժ դեղատու, եթերայուղատու ու համեմուն-քային բույսերի անհող մշակույթի գիտական հիմունքների և հիդրոպոնիկ արտադրության կենսատեխնոլոգիաների մշակման բնագավառում: Անհող մշակույթ են ներմուծվել հազվագյուտ, անհետացող ու մեծ պահանջարկ ունեցող մի շարք բուսատեսակներ (ցիանոպիս-գուար-*Cyamopsis teragonoloba* (L.) Taubert, կուսածաղիկ - *Vinca minor* L., կիտրոնային ռե-հան - *Ocimum basilicum* Hochst var. *citroli*, սովորական գայլուկ - *Humulus lupulus* L.): Ուսումնասիրվել են դրանց ֆիզիոլոգա-ագրոքի-միական, դեղա-կենսաքիմիական առանձնա-հատկությունները անհող մշակույթի պայման-ներում: Ի հայտ է եկել սննդալուծություն մակ-րո (N, P, K) և մի շարք միկրոէլեմենտների խտության և հարաբերության փոփոխման, ինչ-պես նաև արմատային սննդալուծության կարգա-վորման միջոցով երկրորդային ծագման միա-ցությունների (եթերայուղեր, ալկալոիդներ և այլն) կենսասինթեզը որոշակիորեն ուղղորդե-լու հնարավորությունը:

Կատարված հետազոտությունների արդ-յունքների հիման վրա հաշվետու շրջանում տպագրվել են 58 աշխատանք, որոնցից 28-ը արտասահմանում:

Լուրջ ուշադրություն է դարձվում երիտա-սարդ կադրերի պատրաստմանը: Ինստիտու-տում երիտասարդ գիտաշխատողները կազմում են աշխատակիցների 35 %: Չորս երիտասարդ գիտաշխատող և ասպիրանտ ներկայումս գոր-ծուղվել ու սովորում են Հունաստանի, Գերմա-նիայի և Շվեյցարիայի տարբեր գիտահետազո-տական կենտրոններում:

Ընդլայնվում է ինստիտուտի գիտագործնա-կան համագործակցությունը արտասահմանյան և հայրենական տարբեր կազմակերպություն-ների հետ:

Այսպես, օրինակ, ինստիտուտի երիտա-սարդ գիտաշխատողներից մեկը շուրջ երկու տարի համատեղ գիտական աշխատանք է կա-տարում Մյունխենի տեխնիկական համալսա-րանի բուսաբուծության ֆակուլտետում, սկիզբ է դրվել ԱՄՆ Ազգային կոնալ սաղմնապա-մային շտեմարանի (ԱՄՆ Գյուղատնտեսության նախարարություն, Գյուղատնտեսական հետա-զոտական սերվիզ) և «Երևանի գարեջուր» ՓԲԸ-ան համատեղ գիտական հետազոտություննե-րին: ՀՀ ԳԱԱ Ա. Լ. Մնջոյանի անվան մուրը օր-գանական քիմիայի ինստիտուտի հետ համա-տեղ, փորձնական նպատակով, արտադրվել է մեծ պահանջարկ ունեցող «Կալախտի հյութ» դեղամիջոցը: Շարունակվում են ԵՊՀ օրգանա-կան քիմիայի ամբիոնում ակադեմիկոս Ա. Ավե-տիսյանի կողմից սինթեզված «ԱՆՏԻ-85» խթա-նիչ փորձարկումները հիդրոպոնիկայի պայ-մաններում:

Ինստիտուտի ջանքերով և ՀՀ ԳԱԱ նախա-գահության N 4/1884 որոշմամբ Էյմիածնի գի-տա-արդյունաբերական հիդրոպոնիկական բա-զայի հիման վրա ստեղծված է «Դարման» ՍՊԸ-ը, որտեղ ներդրվում են ինստիտուտում մշակ-ված հիդրոպոնիկ կենսատեխնոլոգիաները թանկարժեք, հազվագյուտ և մեծ պահանջարկ ունեցող դեղաբույսերի, ինչպես և եթերայուղա-տու, համեմունքային, տեխնիկական ու այլ մշա-կաբույսերի անհող արտադրության ուղ-ղությամբ: 2004 թ. հոկտեմբերին պայմանա-գիր է կնքվել «Մարազ» ՍՊԸ հետ՝ 2005 թվից հազվագյուտ և մեծ պահանջարկ ունեցող դե-ղաբույսերի, ինչպես նաև համեմունքային և եթերայուղատու բույսերի հիդրոպոնիկ արտադ-րության ու իրացման վերաբերյալ:

Միաժամանակ պետք է նշել, որ սեփական կիրառական մշակումների ներդրումը և իրա-նունը կնպաստի ինստիտուտի նյութատեխնի-կական բազայի զարգացմանը, վերազինմանը, ամրապնդմանն ու իրավիճակի արմատապես փոփոխմանը:

ՀՀ ԳԱԱ նախագահությունը հավանություն տվեց ՀՀ ԳԱԱ Գ. Ս. Դավթյանի անվան հիդրո-պոնիկայի պրոբլեմների ինստիտուտի 2002-04 թթ. գործունեությանը:

Ինստիտուտի առաջնային ուղղությունը հա-մարվեց թանկարժեք, հազվագյուտ, անհետա-ցող և մեծ պահանջարկ ունեցող փոքրատոն-նաժ դեղաբույսերի, ինչպես և եթերայուղատու, ներկատու, տեխնիկական ու այլ մշակաբու-յսերի անհող աճեցման գիտական հիմունքների և հիդրոպոնիկ արտադրության կենսատեխնո-լոգիաների մշակումը:

ՀՀ ԳԱԱ նախագահությունը ընդունեց հա-մապատասխան որոշումներ:

Գառնիկ ՇԱԽԱՅԱՆ
Ծարտարապետության
դոկտոր, ԵՃՀԳ պրոֆեսոր

Կանայք և պատերազմը

Իմ մութ սենյակը լեցուն է հոգիներով. մութը շղարշել է ամեն բերկրալիկ. պատերազմը վեր է հանում ընդգծված լավն ու ծայրահեղ վատը... Որպես կյանքի արարողներ, կանայք սովորաբար առավել զգացմունքային են հակամարտության հանդեպ... սակայն պատերազմն ու խաղաղությունն ակնառու զենդերային սահմանագծեր չունեն: Թեպետ կանայք հաճախ անմեղ զոհեր են, և խաղաղարար հանձնախմբերում Զյուսիսային Իռլանդիայից մինչև Իսրայել ու Սերբիա գերազանցապես կանայք են, նրանք նույնպես կարող են սպանել... նաև դաժանաբար, ինչպես տեսանք Ռուանդայի ցեղասպանության ժամանակ:

Ջենի Մեթյուս



2005. ԻՆՏԵՐՆԵԼ ԻՄԵԼԻՏ, ԵՄ ԳՆՈՒՄ



Ազդեցիկ այդ ցուցահանդեսը հայացք է նետում կանանց, այդի կանանց, փախստականներին, մազապուրծ եղածներին, խնամք տածողներին, պատերազմողներին ու խաղաղության մարտիկներին: Խորը և ընդարձակ շարք. այն Ջենի Մեթյուսի վերջին 20 տարիների հիմնական հակամարտությունների մեծամասնության լուսաբանումից բաղված անձնական օրագիրն ու ուսումնասիրությունն է:

Ջենի Մեթյուսը, անկախ լուսանկարիչ ու օպերատոր է, վավերագրում է զինված հակամարտությունների ավերիչ ազդեցությունը կանանց վրա: Նրա աշխատանքները ցուցադրվել են ՕԲՍԵՍՄ-ի և Վոլենթայնյո Ուորլդվայդ-ի կողմից և հայտնվել են այնպիսի ամսագրերում, ինչպիսին է «Մադեր Ջոնսը»:

Ցուցահանդեսը, որը բացվել էր 33 ԳԱԱ Գեղարվեստի սրահում, ցնցող տպավորություն թողեց այցելուների վրա: Ցուցասրահի հյուրերը լուսանկարիչներ, լրագրողներ, կինոօպերատորներ իրենց շնորհակալությունը հայտնեցին Զայաստանում Բրիտանական խորհրդի աշխատակցներին, նման հետաքրքիր միջոցառման համար:



10 հունիսի 1955 թվականի խումբ գիտնականներ «Մարշալի ծրագրի» համաձայն և վերջինիս ֆինանսավորմամբ դնում են առաջին ատոմակայանի հիմքը: Դրանով սկսվում է ատոմային էլեկտրակայանների շինարարությունը, երևույթ, որն այսօր այնքան մասնական է, որ այլևս ոչ զարմանք, ոչ զայրույթ չի առաջացնում: Իսկ ահա 1955 թվականի «տվյալներով», այդ երևույթը դիտվում էր որպես Արևմուտքի ագրեսիվ քայլը Արևելքի, այսինքն՝ Խորհրդային Միության դեմ: Չէ որ «Մարշալի ծրագիր» ասելիս մարդիկ հասկանում էին ագրեսիա: Ով կմտածեր, թե ընդամենը 50 տարի հետո այն կդիտվի որպես զուտ գիտատեխնիկական երևույթ:

Ո՞վ է ասել, թե համակարգիչը մարդու բարեկամն է

Ասում են՝ ինչքան քիչ իմանաս, այնքան հանգիստ կքնես: Ահա, օրինակ, նստած ես համակարգիչի առջև, կոճակներն ես սեղմում, իսկ այդ ընթացքում համակարգիչի ներսում կամաց-կամաց հավաքվում է «տոկսիկ փոշին», որը վտանգավոր է ոչ միայն առողջության, այլև կյանքի համար: Այս մասին հաղորդել է Միլիկոնային Յոլտի տոկսիկոլոգների գծով ընկերակցությունը: Համակարգիչների պրոցեսորներում և մոնիտորների վրա հայտնաբերված «տոկսիկ փոշին» պարունակում է քիմիկատներ, որոնք վնասակար են ոչ միայն նյարդային համակարգի, այլև ծնող դառնալու կարողությանը:

Այդ տոկսիկները, PBDE անունով, էլեկտրոնային արտադրությունում սկսեցին օգտագործել անցյալ դարի 70-ական թվականներին, հիմնավորելով, որ դրանք կանխում են էլեկտրոնային սարքերի ինքնայրույնը և ոչ մի պարագայում չեն կարող դուրս գալ արտաքին միջավայր ու վնասել մարդկանց: Մինչդեռ պարզվում է, որ կարող են:

Այսպիսի հետևության եկան հետազոտողները, որոնք Միացյալ Նահանգների վեց նահանգներում բազմաթիվ համակարգիչներից վերցրին փոշու նմուշներ՝ ներառած համալսարանական համակարգչային լաբորատորիաները, տարբեր կազմակերպությունների համակարգիչներն ու մանկական թան-

գարանի ինտերակտիվ դիսփլեյներ: Համակարգիչների այն հսկայական զանգվածը, որ պարունակում է այդ չարաբաստիկ փոշուն, Միացյալ Նահանգներում պետք է վաճառքից հանվեն 2004 թվականին: Սակայն լսվում են նաև ծայրեր, որ դեռևս վերջնականապես ապացուցված չէ մարդկային տարբեր հիվանդությունների և այդ չարաբաստիկ «փոշու» անմիջական կապը: Եվ որ առայժմ ընդամենը խոսքը վերաբերում է լաբորատոր առնետներին, որոնք իսկապես որ «վատ են զգում իրենց»:

Երևի այս է պատճառը, որ մասնագետները դեռևս չեն ասում, թե

համակարգիչներից օգտվողները շուտափույթ պետք է փողոց չպրտեն այդ համակարգիչները: Առավել ևս, որ առայժմ ոչ մի միջոց չկա պայքարելու այդ «PBDE փոշու» դեմ:

Հանգստացնող հանգամանք է այն, որ արդեն քանի տարի համակարգիչ արտադրող շատ ֆիրմաներ աշխատում են ձեռնպահ մնալ և օգտագործել այդ տոկսիկները: Եվ, այնուամենայնիվ, անհանգստանալ և մտահոգվել պետք է: Իսկ եթե այդ չարաբաստիկ «տոկսիկները» հանկարծ մտնի քո մեջ և...

(Ռուսական մամուլից)



Մեկ րոպեում... երկու մահացություն

Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը հրապարակել է ծանապարհա-տպանապորտային պատահարների վիճակագրությունը: ԱՀԿ-ի տվյալներով երկիր մոլորակի վրա ամեն 30 վայրկյանը մեկ ծանապարհային վթարներից զոհվում է մեկ մարդ:

Այլ խոսքով, ծանապարհա-տրանսպորտային պատահարներից ամեն տարի մահանում է 1,2 միլիոն մարդ, իսկ 20-50 միլիոն մարդ ստանում են ծանր վնասվածքներ:

Հաշվարկված է նաև, որ տուժածների խնամքի և առողջացման համար տարեկան ծախսվում է 425 միլիարդ եվրո:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության փորձագետները հանել են ծանապարհա-տրանսպորտային պատահարների զոհի միջին վիճակագրական «պորտրեն»: Դա մոտոցիկլին նստած 15-44 տարեկան տրամադր է:

Ինսուլին, որը պրվում է հաշմանդամ թոշակառուներին, բայց ոչ շաքարախտով հիվանդներին...

Որ հայերը աշխարհին տվել են շատ տաղանդներ, հայտնի է բոլորին, Որ հայերը տրամաբանող, ճշմարտության ու արդարության համար մարտնչող են, դարձյալ հայտնի է բոլորին, բայց չգիտես ինչու, հենց հայերս դարձանք «Հայկական անեկդոտների» հերոսներ: Սա նույնպես հայտնի է բոլորին:

Ինչու հայկական: Քանզի մեր կյանքը լի է զավեշտական իրավիճակներով: Դրանցից շատերը կարող էին գրվել Գինեսի գրքում, բայց գրողն ո՞վ է... Իսկ ով ուզում է գրել, պատմեն մի նոր անեկդոտ, բայց իրական... ժամանակակից: Այս անգամ հեղինակները առողջապահության խնդիրներով զբաղվողներն են: Խոսքը անվճար բուժսպասարկման մասին է (եթե այն կա): Ահա, թեկուզ, շաքարախտով տառապող մարդկանց ինսուլին մատակարարելու հարցը: Խոսքով այն արվում է, ըստ որում տրվում է անվճար, քանզի այն դեղամիջոց չէ, որը տկարություն է բուժում: Այն ներարկվում է շաքարախտով տառապող մարդկանց մարմնի մեջ,

քանզի սեփական մարմինը կամ ինսուլին չի արտադրում, կամ այն արյան մեջ չի անցնում, և մարդը կողմնակի ինսուլինի կարիք ունի:

Հանրապետությունում տասնյակ հազարների են հասնում շաքարախտով տառապողները, և նրանք, ովքեր այդ հիվանդներին ասում են «ինսուլին չկա», կնշանակի նրանք վերջիններիս դատապարտում են մահվան:

Բայց գինեսյան տրամաբանությամբ ապրող ու գործող նորագույն հայերը ինսուլինի գործունեությունն էլ «կամոնակարգեցին»: Բա էլ ինչ «նոր հայեր»: Ու ահա կանոն-կարգ-գե-ցին:

Այսպես, ուրեմն, երկու այցելու մտնում են էնդոկրինոլոգի մոտ:

- Ես շաքարախտով հիվանդ եմ 20 տարի, և ուզում եմ ինսուլին ստանալ...

- Ես էլ,- չի հապաղում մյուսը: Էնդոկրինոլոգը հանում է հրամանը վերևից. «Ինսուլին տալ միայն կարգ ունեցող հաշմանդամներին»:

- Ես կարգ չունեմ, բայց միշտ

ստացել եմ ինսուլին, առանց որի իմ շաքարը բարձրանում է մինչև 400-500 միավոր, որը մահացու է:

Իսկ մյուսը նկարագրում է իր վիճակը:

- Եիշտ է, իմ շաքարը թույլատրելի սահմանի վրա է, բայց ես երկրորդ կարգի հաշմանդամ եմ, որը ստացել եմ ավտոմեքենայի հարվածից հետո, ահա տեսեք ասում է ու պարզում ձեռքը, որի բութ մատը տեղում չէր:

Բժիշկը լսում է ու վճռում. «Ինսուլինի միակ սրվակը տրվում է հաշմանդամության կարգ ունեցողին: Հրաման կա, ի՞նչ անեն»:

Երեքով մայում են իրար հարցական հայացքով: Հետո բժիշկը բացում

է «Գինեսի մատյանը» ու ցույց տալիս վերևից եկած հրամանը:


«Ինսուլինը տալ միայն հաշմանդամության կարգ ունեցողներին»: Տրամաբանությունն ասում է՝ մյուսները թող սպասեն, մինչև հաշմանդամ դառնան կամ մինչև երկիրն այնքան հարստանա, որ ինչպես խորհրդային իշխանությունների ժամանակ, ինսուլինը տրվեր անվճար, իսկ հնդկաձավար, սիսեռ, մրգաշաքար, դիաբետիկ շոկոլատ, ծիրապտղի յուղ և այլ մթերքներ տրվեին բառացիորեն կոպեկներով:

Դե, հին կարգերը շատ էին վախենում ժողովրդի կարծիքից, իսկ նոր իշխանությունները արհամարհում են թե՛ ժողովրդի կարծիքը, թե՛ ժողովրդին:

- Մենք առողջ մարդկանց մասին պետք է մտածենք և ոչ թե հիվանդների...

- Հա, հա, հա... Տխուր զավեշտի վերջը:

Հողվածը պատրաստ էր տպագրության, երբ հանրապետության մամուլը և անդրադարձավ խնդրո առարկա հարցին: Ինսուլինի դեֆիցիտը «վերացնելու» համար մեկը պատրաստվում է Հայաստան ներկրել եգիպտական դեռ չստուգված, չփորձած, առողջապահական մարմիններին անհայտ ինսուլին: Հայաստանը դառնում է փորձադաշտ, հայերը՝ փորձարկման սուբյեկտներ: Ցավոք, այդ հույժ կարևոր, կենսական խնդրի մասին հրապարակավ իրենց կարծիքը դեռ չեն հայտնել առողջապահության մարմինները: Իսկ հիվանդները սպասում են...



ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ, ԲԱԺԻՆՆԵՐԻ ԴԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ.

ՀՀ ԳԱԱ նախագահության միջոցառումների շնորհիվ «Գիտություն» թերթը 2005 թվականին կիրառարակվի կանոնավոր: Սակայն այս հարցի լուծումը կախված է ձեռքից, եթե Դուք բաժանորդագրվեք թերթին: Մեկ տարվա բաժնեգինն է 2400 դրամ: Հնդրակալ կլինեինք, եթե դուք բաժանորդագրվեք 20 օրինակ և բաժնեգինը կանխիկ վճարեք խմբագրությանը կամ փոխանցեք հետևյալ հասցեով՝ Զարգացման հայկական բանկ, հաշիվ՝ 18100-52001573313, «Գիտություն» թերթի խմբագրություն:

«Գիտություն» թերթի խմբագրություն

Առաջիններից մեկը

Ռուսերենի նշանավոր արմատական բառարանի հեղինակ Դալը առաջիններից մեկն էր, որ պայթեցման գործում օգտագործեց էլեկտրական հոսանքը: Մի անգամ, լեհական կոմպանիայի ժամանակ, երբ նրա գործառնալ նահանգեց գետի մյուս ափը, Դալը ականապատեց գետանցը և, երբ հակառակորդը շատ մոտ էր, անձամբ փակեց էլեկտրական շղթան, որը հոսանքի աղբյուրը միացնում էր պայթուցիկի հետ:

Նրա պետքը գեկույց հղեց կորպուսի հրամանատար, գեներալ Ռիդիգերին՝ դիվիզիոնային բուժակ Դալի վճռական և խիզախ գործողությունների մասին:

Գեներալը գեկույցի վրա մակագրեց. «Սխրանքի համար ներկայացնել շքանշանի: Հայտարարել խիստ նկատողություն իր անմիջական պարտականություններից խուսափելու և դրանք չկատարելու համար»:

Ռուսաստանի կայսրը չափազանց զավեշտական գտավ սույն մակագրությունը, իսկ բուժակ Դալը պատերազմից տուր դարձավ Վլադիմիրի շքանշանը կրծքին:

Յուրովի «խենթության» դրսևորում

Ինչպես նկատել է Վ. Սուլտանինը, ամեն մի գրող ունի միայն իրեն բնորոշ սովորությունները, որոնք ուրիշների համար հաճախ արտառոց են կամ յուրովի «խենթության» դրսևորում:

Օրինակ, Անտոն Զեխովը գրասեղանի մոտ նստում էր անթերի հագնված՝ կարծես պատրաստվում էր պաշտոնական այցելության:

Կուլպինը, ընդհակառակը, նստում էր գրելու՝ ամբողջովին մերկանալուց հետո: Իսկ Բալզակը իր համար ստեղծում էր արհեստական գիշեր՝ վարագուրելով պատուհանները և գրասեղանը լուսավորելով այրվող մոմերով: Հիլերը գրելիս պետք է ոտքերը դներ սառը ջրով լի տաշտակի մեջ:

Գիտություն

Գլխավոր խմբագիր՝ Վլադիմիր ՍՈՒՐԱՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24 դ, հեռախոս՝ 56-80-14: Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448: Ստորագրված է տպագրության՝ 24.12.2004թ. "ГИТИОН" ("Hayka") gazeta HAH PA

«ԳԻՏՈՒԹՅՈՒՆ»

թերթը հրատարակվում է հովանավորչական միջոցներով: